

Տարվա լավագույն ֆուտբոլիստի որոշման Կարգ

1. Տարվա լավագույն ֆուտբոլիստի անվանակարգի որոշման իրավունքը տրվում է

1. 2017թ. Բարձրագույն խմբի մասնակից թիմերի ակումբների նախագահներին
2. 2017թ. Բարձրագույն խմբի մասնակից թիմերի գլխավոր մարզիչներին
3. 2017թ. Բարձրագույն խմբի մասնակից թիմերի ավագներին
4. ՋԼՄ-ների ներկայացուցիչներին

2. «Տարվա լավագույն ֆուտբոլիստ» անվանակարգում ցուցակի մեջ ընդգրկվում են՝

ա/ Հայաստանի Բարձրագույն խմբի ակումբների կողմից սահմանված ժամկետում ներկայացված իրենց թիմի հինգ ֆուտբոլիստի թեկնածությունները:

բ/ ՀՖՖ կողմից ներկայացված տվյալ մրցաշրջանում ազգային և երիտասարդական հավաքականներում հանդես եկած ֆուտբոլիստների թեկնածությունները:

Եթե ակումբի կողմից առաջարկված տարբերակում կա ազգային կամ երիտասարդական հավաքականների ֆուտբոլիստի ազգանունը, ապա այն ընդգրկվում է ցուցակի մեջ միայն մեկ անգամ:

3. Քվեարկողներին առաջարկվում է վերը նշված սկզբունքով կազմված ֆուտբոլիստների ցուցակը, որոնցից պետք է ընտրել լավագույն երեքին:

Ակումբների ներկայացուցիչները չեն կարող քվեարկել ցուցակում նշված իրենց ակումբի թեկնածուի համար:

Քվեաթերթիկը պետք է ներկայացնել ՀՖՖ փակ ծրարով:

4. Միավորների հաշվառումը կատարվելու է հետևյալ կարգով. 1-ին տեղ` 5 միավոր, 2-րդ տեղ` 3 միավոր, 3-րդ տեղ` 1 միավոր:

5. Միավորների հաշվառումը կատարվում է ՀՖՖ մամուլի քարտուղարության կողմից և արդյունքները հրապարակվում են: